

զօրեղ էր որ իւր մեծ ուժով տապալեց աչաղին Հռովմէական մարմնական մեծութիւնը Ի՞նչի ուրիմն ինքն ալ այնկան գարեր ամենայն օրինաւորութեամբ չկարողացաւ ազգեր և ժողովրդներ կառավարելու և առաջ տանելու։ Այս հարցը դէմ մասնաւոր կերպով լուծելու և հասկանալի կացուցանելու համար հարկ է ուշադրութիւն դարձնել քրիստոնէութեան առաջին գարերին վրայ։

Քրիստոնէութեան չորրորդ գարից սկսած Յիսուսի բարոյականը մինչեւ այդ ժամանակը միմեանցից շատ հետի եղած ազգերին մէջ աղնիւ զբացմունք, սուրբ հաւատ, հաստատ յոյս, սէր և համոզումներ շնչելով՝ նորանց կատեց ու կաշկանդեց միմեանց հետ, տիրելով և իշխելով բարոյապէս նորանց վերայ։ Սակայն այս կէտը ուշ թէ շուտ պիտի չունենար իւր տեղութեամբ բնչպէս և եղաւ. բայտ որում կամաց կամաց ժամանակների սահելը, ազգերի տեղափոխուելը, սերունդների այլ և այլութիւնը. Հին թագաւորութեանց կործանուելը. նորերի վերականգնելը, այլեայլ ժամանակ եղած զիւտերը և այլ բիւր գէպքեր և հանգամանքներ, ցցց տուեցին պարզ կերպով աշխարհքին թէ՝ բարոյական լուսաւորութեան մի տարր կ'պակսի, որ է մուտարական կենաց զարդացնելը, Ուստի այս փորձէն Արևմուտք արևելքէն շուտ դաս առնելով՝ ամենայն ճիղը թափեց ձեռք բերելու զայն, հետեւապէս մեծամեծ զոհեր տալին յետ եր իւր բարոյական լուսաւորութեան հետ միացրեց մոացական կենաց զարդացնելու յառաջադիմութիւնը, այն ժամանակը ծագեց ազգերի այն զրութիւնը, որուն վերայ կանգնած են այժմ երկրագնդի ամենէն բարձր ժողովրդները։

Արդ՝ այս նկատմունքներէն կ'հետեւի թէ՝ ազգի մը՝ բարոյական կապերը հաստատուն և հիմնաւոր խարիսների վերայ պնդացնելով՝ իրան անվտանգ և օրինաւոր կերպով առաջ վարելու համար, բաւական չ'են նիւթական և բարոյական լուսաւորութեանց ըլլալը, Մեր նախնիք կրօնական լուսաւորութեան կատարելագոյն կէտը ժամանեցին. նութականին մէջն ալ նոյնպէս յետ չ'կին։ Սակայն ի՞նչի չ'թողիցին մեզ — իրանց ապագայ սերունդին ինչ որ այժմ ամենէն բարձր անձինք կ'պահանջնեն։

Այս պակասութեան օրինաւոր առիթը մուտքական կենաց յառաջավմնութեան թերութեանը կ'տանք։ Իսկ ինչ որ կ'վերաբերի նիւթական կենաց ապահովացնելու միջոցներուն, որուն վերայ մանրամասն խօսելն երկար կը լինէր, կարծ ասելով կարող ենք առարկել թէ երբ մի ժողովրդի բարոյական և մտացական կենաց ընթացքը օրինաւոր կերպով առաջ վարուի, հարկ է որ նոյն ժողովուրդի նիւթական կենաց ապահովացնելու մի ջոցներն ալ բայտ այնու կատարելագործուեին։

Աչաւասիկ սորանք են մասնաւոր ձևով ճառելով մի ժողովուրդի բարոյական կապերի հիմնական կէտերը, որոնց ամենքն աղ պիտոյ է միևնույն հոգացողութեամբ առաջ վարուի։ Սակայն որով հետեւ մենք քաղաքական կեանք շունինք, ուստի առանձին կերպով մերոնց զիտմամբ նկատելով հարկ է առարկել թէ զորանց առաջին տեղը պիտի բռնէ հոգեկան լուսաւորութիւնը կամ կրօնը, որ պիտի ըլլայ միւս երկուսի հիմանց խարիսխուր։

Իրաւ շատ անգամ ասուած է թէ կրօնական լուսաւորութեան հիմնական կէտերը բոլոր աշխարհների համար միւնույն է և միւնույն հաստատութիւն ունի։ Բայց այօչափ ալ այդպէս կարծուի, այնուամենայնիւ այլեայլ ձևերով, տարագներով, մոքերով, զգացմունքներով, սփոհալ և տարածեալ են ազգաց մէջ։ Ուստի և այս իսկ առիթով է, որ իւրաքանչիւր ազգ իրան յատկացած վարք բարի սովորութիւն, ծէս, արարողութիւն, կարգ, կանոն, օրէնք և լեզու ունի, արտագրողբնութեան հզօր և ազգու զօրութիւնն է։

(Ենացորդն է յաջորդ աշակերտը։)

ԱՊՆԵՔՍԱՆԴՐ ԿԵՑՄՐ Ի ՏՓԽՒՅ։

Ի 20-ն ամսոյս ընդ երեկոս Տփխիս քաղաք արժանացաւ հիւրընկալնուելզՕգոստ։ Եղեքսանդր Ռ. Կիկոլյայեվիչ Կայսրն ամենայն Ռուսաստանեայց՝ ընդ Կայսերորդուցն Գաահամառանգ և մէծ իշխան Առմափառ Եղեքսանդր Եղեքսանդրովչի և ընդ մէծ իշխան Ասեմափառ Ալաղիսիրի

Եղեքսանդրովչի հանդերձ այլովքն՝ մեծահանդէսմեծարանօք, որպիսիք տիրասէր հպատակաց խորին զգացմանց և հաւատարիմ ջերմեռանդութեանց հաւատատիքը ի ցոյց և ի նշան Մեծազօր Ինքնակալին և Այսերազնէից կր նուիրէին:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ԵԿԱՏԵՐԻՆՈՒԹԻՒՆ:

Արբազնագոյն կաթողիկոսն մեր պատիւ
ունեցաւ ի 21-ն ամսոյս մերձ ի կէսօրն
ներկայանալ Կորին կայսերական Պա-
ծութեան Ինքնակալ կայսերն ամենայն
Ոռուսաց Օգոստափառ Եղեքսանդրի Բ
Նիկոլայեվչի յապարանսն Փոխարքային:

Օգոստ. Կայսեր սիրալիք ընդունելու-
թիւնը և արտայայտած բարեհաջած համա-
կրութիւնն առ Ա-կհ. Հայրապետ մեր՝
արգարե մեծ պատիւ և մխիթարութիւն
է ազգիս:

Եսոյն աւուր ընդ երեկո՝ Արբազան
Հայրապետի մերում յայցելութիւն եկին
Վասեմ. Կոմս Շովալով և պալատականն
Կայսեր Վասեմ. Թարյէեպ գօրապետ:

卷之三

¶ 23-ն ամսոյս հինգշաբաթի աւուրն
լրտանալոյ զիշերին յառաջին պահու՝
յապարանսն Փօխարքային Առվկասեան
գաւառաց թագաւորազուն Մեծ Խշան
Վասեմափառ Վիքայէլ Նիկողայիշի պատ-
րաստեալ ընթրեացն ի պատիւ Օգոստ.
Կայսեր, յորում հրաւիրեալ էին պաշ-
աօնական երեելի անձինք՝ զլիսաւորք և
կրօնական պետք ամենայն ազգագ, պատ-

գամաւորք և երեսփոխանք աղջաց Առվ-
կասեան աշխարհին ի կողմանց կողմանց
և ի քաղաքաց, մերազնեայ թագուհին
Վարաց՝ որպէս և դեսպանքն Օգոստ.
թագաւորին Պարսից և Օգոստ. Կայսերն
թառըքիոյ, մերս Վեհ. Կաթողիկոս ևս
հրաւիրեցաւ անզր և սեղանակից եղե
Օգոստ. Կայսեր:

ԿԱՑՈՒԹՈՐԴԻ ՀԵՏԱԼՈՒՔ.

Ե 24-Ն ամսոյս մերձ ի կեսօր կայսեր-
որդիքն Մեծ Խշան և Գաւհաժառանդ
Վ սեմափառ Եղեքսանդր Եղեքսանդրովիչ
և Վ սեմափառ Մեծ Խշան Վ լազիմիր
Եղեքսանդրովիչ եկին յայցելութիւն Եռ-
րին Արբութեան Կաթողիկոսի ամենայն
Հայոց:

LITERATURE

Ե 25 -ն ամսոյս իրը զերկըորդ ժամաւ-
առաւօտեան Օդոսա. Կայսրն վերադար-
ձաւ ի Տփխիսոյ հանդերձ Կայսերորդւովքն
և այլովք՝ և ուղեորեցաւ գէպ ի ծովե-
զերեայ քաղաքն Փօթի, յորմէ ունի եր-
թալ ընդ ծով ի Խրիմ և անտի յետ սա-
կաւուց ի Ա. Պ. Բուլգա:

ՀՅԱՆՉԱՆ ԱԿԱՆԱԿԱՅՈՒԹ

Բատ զրութեան Ասեմ. Մեծ Խշան
Փոխարքային որ ի 24-ն ամսոյս՝ Օգոստ.
Կայսրին ի 22-ն ամսոյս տուած է Անհ.
Կաթողիկոսի ազգիս Հայոց (արդէն ու-
նեցած) Ա. Եղիքանդրի Կելվացւոյ աս-

պետութեան առաջին կարգի շքանշանի
զականակուուն:

Եմագրոյս յաջորդ թուով արժան կը
համարիմք հաղորդել Եզգայնոց մերոց
Կայսեր հրովարտակին և Փոխարքային
դրութեան օրինակները:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՔ.

Կուսակալ Աեղբոնական Կահանդին
Կարնոյ և հրամանատար Ասիոյ (կամ չո-
րորդ) բանակին թուրքիոյ Վահմափայլ
Մուսթաֆա Փաշայն, և եղբօրորդի Շա-
հին արքայազուն իշխան Վահմափառ
Համզա - Միրզա - Հէջմիթիտ - (Տէօվլէթ)
Տէվլէթ սպարապետն - որոց առաջինն ի
զիմաց Օգոստ. Կայսեր թուրքիոյ և միւ-
սըն ի զիմաց Օգոստ. Շահին Պարսից
լիազօր դեսպանութեամբք եկած էին առ
ի շնորհաւորել զգալուստ Օգոստ. մեծա-
զօր Խեքնակալ Կայսերն Ռուսաց ի Տըփ-
խիս, — այցելութեամբք առ Վահմափառ
Հայրապետ մեր՝ և փոխադարձովք Կորին
Արբութեան՝ սիրալիր համակրութեամբք
և արժանավայել մեծարանօք և յարգա-
նօք պատուեցին զմիմեանս:

ՏՕՆԱՆՄԲՈՒԹԻՒՆ.

Վահմափառ և Արբազնազոյն Կաթո-
ղիկոսի ամենայն Հայոց անուանակոչու-
թեան տօնախմբութիւնը ի 26-ն ամսոյս
վայելուչ հանդեսներով կատարուեցան
թէ աստ և թէ ի Տիփիս:

ՀԱՐՑԱԲՆԱՌԻՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՇԻՒ
ՀՈԳԵԿՈՅ ԱԶԳ ԴՊՐՈՑԻՆ ՀԱՅՈՑ ԱՐՅԱՆՈՑ:

(Երցախոյ Հայոց Եզգ. Հոգե. Դպրոցին
Հոգաբարձութիւն մատուցանելով Աեհ.
Կաթողիկոսին հետևեալ յայտարարու-
թեամբ Դպրոցին հարցաքննութեան՝ ա-
շակերտաց թուոյն և եկամտից վերայ կա-
րեսր տեղեկութիւնք՝ արժան կը համարիմք
զայնոսիկ հաղորդել ի գիտութիւն Եզգայ-
նոցս Արարատայ միջոցաւ):

ԽԵՆԴԵՐԻ-ԲԵՅԻ ԵՐԱՐԱՐ ԵՀԱՆԴԵՐԻ:

Ի Հոգաբարձութեանս յայսմիկ լուան զգեկու-
ցումն—Տէր Նախագահն և Անդամք Հոգաբար-
ձութեանս և պաշտօնակատարն տեսչի Հոգեոր
Դպրոցին Հայոց Վարապաղու արժան վարկան՝
համաձայն 5—րդ յօդ՝ Զ). զլուիս. կանոնադրութեան նոյն Դպրոցին՝ պարզեատրել այսօր
(18 Յուլիսի) ի վերջ հարցաքննութեան աշակեր-
տաց Դպրոցին, որ և յաւուր հանդիսի պարզեա-
բաշխութեան նոցին՝ զէՅ յառաջադէմ աշակեր-
տըս զանազան գպրոցապատկան մատենիւք, և
վարձատրել զՅՅ աշակերտս գովասանական թըլ-
թովք, որք յասպարիզի հարցաքննութեան տա-
րւոյս՝ ցուցին զյառաջադիմութիւնն ի գիտութիւնս
և ի կարևոր մակացութիւնս ուսմանց իրեանց, և
որք, որպէս յայտնի է, տէր են գովանի վարուց և
բարուց, Պարզեատրեալ մատենիւքն են այսոքիկ—
“Ներածութիւն Աստուածարանական գիտելեաց՝
8 հատ, Ներքին կեանք հին Հայաստանի՝ 19 հատ
և համառօտ աշխարհաբառ Ազգային պատմու-
թիւն՝ 16 հատ,, ընդամենն քառասուն երեք հատ,
իսկ գովասանական թուղթքն երեսուն վեց հատ:
Սահմանեցին՝ ցուցակագրել զանուանս աշակեր-
տաց պարզեատրելոց և վարձատրելոց մատենիւք և
գովասանական թղթովք, զորս և յետ կնքելոց
կնքովք Հոգաբարձութեանս՝ նուիրել նոցա հա-
մաձայն ցուցակագրեալ թերթին, Խոկ զմի օրինակ
ուղիղ պատճենի յաւուր հանդիսի պարզեարաշ-
խութեան կազմեալ վկացարանութեանն մտից և